

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
վիճակագրության պետական խորհրդի նիստի

12.03.2015թ.

Ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ):

Օրակարգի նախագծում չորս հարց.

1. «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի եվ վերլուծության նախարարության 1998 թվականի նոյեմբերի 18-ի N 150, 1999 թվականի հունիսի 30-ի N 128 և 2000 թվականի փետրվարի 25-ի N 18 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Սարոյան/

3. Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2015 թվականի մարտի 3-ից 6-ը ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 46-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2014 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի հաշվետվությունը»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. . «Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի եվ վերլուծության նախարարության 1998 թվականի նոյեմբերի 18-ի N 150, 1999 թվականի հունիսի 30-ի N 128 և 2000 թվականի փետրվարի 25-ի N 18 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Սարոյան/

Որոշեցին՝

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության 1998 թվականի նոյեմբերի 18-ի «Միջազգային համագործակցության շրջանակում նախարարության կողմից ծրագրերի (վարկային, շնորհային) վարման կարգը հաստատելու մասին» N 150, 1999 թվականի հունիսի 30-ի «Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվող իրավաբանական անձանց գրանցման գործընթացը կանոնակարգման անհրաժեշտության մասին» N 128 և 2000 թվականի փետրվարի 25-ի «Լիցենզավորման

Ենթակա գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի գրանցման գործընթացը կանոնակարգման անհրաժեշտության մասին» N 18 հրամանները:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին`

3. Հաղորդում` ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2015 թվականի մարտի 3-ից 6-ը ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 46-րդ նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ` Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

Որոշեցին`

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ